

14913

ՅԱ. ՎԻԿՏՈՐՈՎ

Ա Գ Ր Ե Ս Ի Ա Ն
Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Յ Ե Վ Ր Ո Պ Ա Յ Ո Ւ Մ

(ՄԻՋԱԶԳՈՒՑԻՆ ՏԵՄՈՒԹՅՈՒՆ)

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

32
459

32
4-59

Այ

ՅԱ. ՎԻԿՏՈՐՈՎ

26 SEP 2006

1 DEC 2009

Ա. ԳՐԵՍԻԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ

(Միջազգային տեսություն)

Պ Ե Տ Ն Ր Ա Տ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939



1474
39

Я. ВИКТОРОВ
АГРЕССИЯ В ЦЕНТРАЛЬНОЙ
ЕВРОПЕ

Արիցիս—Издательство полит. литературы
Ереван, 1939

Տենդի մեջ գալարվում է կապիտալիստական Յեվրոպայի քաղաքական կյանքը:

Մարդիկ ապրում են ինչպես վառողանկուղի վրա, ամեն ուր պայթյունի սպասելով աշխարհի մերթ այս, մերթ այն մասում: Յերկրները, պետությունները, ժողովուրդները լարված սպասողական դրության մեջ են՝ ի՞նչ կլինի վաղը:

Յեվրոպայում առաջանում են պատերազմի շարունակ նորանոր հանգույցներ: Գերմանական Ֆաշիզմը, չբավականանալով Իսպանիայում կատարած ինտերվենցիայով, Ալյատրիայի աննեքսիայով, զավթում է Չեխոսլովակիան: Ազրբեյջանի կենտրոնական Յեվրոպայում—ուղղակի հետևանք է ազրբեյջանցի բրդի ակտիվության, հետևանք է այն անպատժելիության, վորից ողտվում են պատերազմի հրձիգները՝ շնորհիվ բուրժուազեմոկրատական պետությունների թողտվության քաղաքականության, հետևանք է ընդհանուր իրադրության, վորը բնութագրվում է նրանով, վոր

«յերկրորդ իմպերիալիստական պատերազմն իրոք արդեն սկսվել է: Նա սկսվել է գաղտագողի, առանց պատերազմ հայտարարելու: Պետություններն ու ժողովուրդները մի տեսակ աննկատելիորեն սահել են դեպի յերկրորդ իմպերիալիստական պատերազմի որբիտը: Աշխարհի զանազան ծայրերում պատերազմն սկսել են յերեք ազրբեսիվ պետություններ,—Գերմանիայի, Իտալիայի, Յապոնիայի Փաշիստական ղեկավար չրջանները: Պատերազմը մղվում է հսկայական տարածության վրա՝ Ջիրբալտարից մինչև Ծանհայ: Պատերազմն արդեն կարողացել է իր որբիտի մեջ քաշել կես միլիարդից ավելի բնակչություն: Նա մղվում է վերջին հաշվով ընդդեմ Անգլիայի, Փրանսիայի, ԱՄՆ-ի կապիտալիստական շահերի, վորովհետև նրա նպատակն է աշխարհի և ազրբեյջանյան վո-

լորաների վերաբաժանումը հողու ազրեսիվ յերկրների և ի հաշիվ այդ այսպես կոչված դեմոկրատական պետութունների»¹ :

Ազրեսիան ընթանում է յոթմղոնանոց քայլերով : Յապոնիայի թալանչիական պատերազմը Չինաստանում, իտալո-գերմանական ինտերվենտների հանցագործ պատերազմն ընդդեմ իսպանական ժողովրդի, Ալսաբիայի զավթումը գերմանական Փաշիզմի կողմից, Չեխոսլովակիայի կողոպտումը—սրանք են փաստերը : Ազրեսորենի բլոկին չի հակադրված խաղաղասեր պետութունների միասնական ճակատը, և դրանից լայն կերպով ոգտրվում են պատերազմի հրձիգները : Բուրժուա-դեմոկրատական «մեծ» պետութունները կամ ուղղակի յերես են տալիս և խրախուսում են ազրեսիան, կամ փորձում են խուսափել նրանից, թաղնվել «չմիջամտութան կոմիտեյի» հետևում, Ազրերի վրգայի զանազան կոմիտեների գուտապերչային բանաձևերի հետևում : Նրանք փորձում են փրկազնվել փոքր կամ ալելի թույլ պետութունների հաշիվն : Բայց ազրեսիան ընդհուղ մերձենում է ալելի ու ալելի : Ալելի ու ալելի համառ կերպով և գրվում հարցը . կամ դիմադրութուն ազրեսորին, կամ լիակատար կապիտուլյացիա նրա հանդեպ : Մշտական գլխումների քաղաքականութունը բորբոքում է Փաշիստական հալիտակիչների ախորժակը, վորոնք ուժեղացնում են ճնշումը վոչ միայն ազրեսիայի նախանչված զոհերի վրա, այլև խոչոր բուրժուա-դեմոկրատական պետութունների վրա, վորոնցից ազրեսորը սանկցիաներ է պահանջում նոր զավթումների ու կողոպուտների համար : Հենց այդպես էր և այդպես է դործը Չեխոսլովակիայի վերաբերմամբ : Յեվ հարց է ծաղում . բայց դուցե ազրեսորենն այնքան ուժեղ են, վոր Անգլիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը ի վիճակի չեն նրան հակահարված տալու : Չկա ալելի անհեթեթ բան, քան նման պնդումները : Անկասկած, այսպես կոչված «մեծ» պետութունները ռազմական և տնտեսական շատ ալելի մեծ հզորութուն ունեն, քան ազրեսորները : Կարիք էլ չկա ասելու, վոր խաղաղասեր պետութունները միասնական ճակատ ստեղծվելու դեպքում, նրա մեջ Խորհրդային Միութունը մասնակցութուն ունենալու դեպքում այդալիսի ճակատի ուժը բացարձակապես անհաղթահարելի կլիներ :

¹ Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Կուտակցութան պատմութուն : Համառոտ դասընթաց, էջ 447—448 :

Անգլիական «Թայմ ենդ Թայլ» ժուռնալը Կենտրոնական Յեվրոպայի կրիզիսին նվիրված հոդվածում նկատի չունի այդալիսի լայն հեռանկար, բայց, խոսելով միայն Անգլիայի և Ֆրանսիայի դիրքի մասին, գրում է .

«Անգլիայի և Ֆրանսիայի առաջ ծառայող յերկրորդ կամ ռիսկ անել պատերազմի գուրա դալ Գերմանիայի և նրա դաշնակիցների—Իտալիայի և Յապոնիայի դեմ, կամ կապիտուլյացիա Հիտլերի հանդեպ և բավարարել նրա պահանջներն արևելյան և հարավ-արևելյան Յեվրոպայում տիրապետելու նրկատմամբ : Նրանք ընտրեցին կապիտուլյացիան : Ամենին վոչ այն պատճառով, վոր այլ ընտրութան դեպքում պատերազմն անխուսափելի կլիներ : Հեշտ է հասկանալ, վոր արևմտյան տրութունների ալելի սպառնալի դիրքը կվախեցներ Հիտլերին . . . Բայց յեթե վոր նույնիսկ Հիտլերը, չնայած նրա սպառազինումների թերութուններին և տնտեսական գժվարութուններին, սիրտ աներ պատերազմել, կշահեյին՝ արդյոք այդ պատերազմն արևմտյան պետութունները : Ամեն ինչ վկայում է, վոր այս . . . Վերջին հաշվով արևմտյան տրութունների հակայական ռեսուրսները վճռական և վճռողական գերակշռութուն կստանային յերեք տոտալիտար պետութունների անբավարար և անկայուն ռեսուրսների վերաբերմամբ» :

Ազրեսորներին հակահարված տալը, ժուռնալի կարծիքով, առալել ևս անհրաժեշտ է, քանի վոր սպառնալիքն ուղղված է ամիջականորեն Անգլիայի և Ֆրանսիայի դեմ : «Հիտլերը, —չարունակում է ժուռնալը,—չուս կգա դեպի արևմուտք՝ վոչ միայն ընդդեմ Ֆրանսիայի, այլև ընդդեմ Անգլիայի, վորովհետև տոտալիտար պետութունների յեռյակ միութունը հիմնված է Բրիտանական կայսրութան նկատմամբ ունեցած թշնամութան վրա : Տոտալիտար պետութունների այդ միութունը պաշտոնապես կոչում են հակակոմիտեներական պակտ . իրականում նա է և միշտ յեղել է հակաբրիտանական պակտ» :

Խիստ արժեքավոր խոստովանութուն է և իրերի իսկական գրութան միանգամայն ճշմարիտ գնահատական : Բայց յեթե այդ այդպես է, ապա ուրեմն ներկայիս լարված իրադրութան համար առալել ևս մեծ մեղավորութուն և պատասխանատուութուն է ընկնում անգլիական դեկալար չրջանների և Ֆրանսահան ռեակցիայի բանակին պատկանող նրանց բարեկամների վրա, վորոնք հանուն իրենց դասակարգային շահերի վիժեցնում են խաղաղասեր տրութունների ճակատը, պայթեցնում են կոլեկ-

աիվ անխտանդության սխտեմը, Հանուն ազրեսորներին հետ համաձայնության գալու գոհում են վոչ միայն փոքր յերկրներին շահերը, այլև իրենց ազգային, պետական շահերը: «Սաղազությունը պահպանելու» գրոշին տակ, նոր ռազմական կոնֆլիկտներն, իբր թե, հետաձգելու համար, նրանք իրոք վիժեցնում են խաղաղությունը, արագացնում են ազրեսիայի զարգացման տեմպը, մոտեցնում են նոր ռազմական ավանտյուրաների ժամկետները: Վոր այդ հենց այդպես է, հաստատում է դեպքերի զարգացումը և մասնավորապես վերջին դեպքերը կենտրոնական Յեվրոպայում:

* * *

Մինչդեռ «Հոտմ—Բեռլին—Տոկիո առանցքն» արյունալի բերնկուճներ և առաջ բերում աշխարհի մերթ այս, մերթ մյուս ծայրում, միտոր Չեմբուլենը և ուրիշները համառորեն յեղք են փնտռում, թե վո՞ր ծայրից մոտենան այդ «առանցքին» ավելի մոտիկ, վո՞ր կողմից կամուրջ դցեն դեպի այն: Յեվ մի բնորոշ մշտականություն. անխփփոխ անհաջողությունները չեն սառեցնում բրիտանական պրեմյերի յեռանդը: Բանի անդամ փորձել են արվել համաձայնության գալու յայտնական իմպերիալիստներին հետ, իսկ Յալոնիան բնավ չի ուզում հաշվի առնել Անգլիայի շահերը և, գրավելով հանդուցային դիրքերը Հյուսիսային և կենտրոնական Չինաստանում, համառորեն գուրս է մղում ալդտեղից Անգլիային, վորը հսկայական կորուստներ և ունենում չինական շուկան կորցնելով: Բոլորի հիշողության մեջ դեռ թարմ է Չեմբուլենի՝ Մուսոլինիի հետ համաձայնության գալու այնքան փոքրալիորեն վերջացած փորձերը, ապրիլի 16-ի անգլո-իտալական շարաքաստիկ համաձայնությունը, վորը մինչև այժմ էլ չի վավերացված: Հանուն այդ համաձայնության Չեմբուլենը զոհեց Իգենին, վորը վոչ այնքան արագ ու հոժարությամբ էր ազրեսորին զիջումներ անում, և այդ համաձայնության հետ կապեց իր քաղաքական կարյերան:

Չեմբուլենն անհաջողության մատնելով «առանցքի» հոտմեական ծայրում, գլխեց բեռլինյան ծայրին: Արդեն Ավստրիայի գավթումը, վորն, ինչպես այժմ պարզվում է, կատարվեց անգլիական դեկալար շրջանների գիտությունը և որհնությունը, ցույց տվեց, վոր դերմանական ազրեսորի հետ համաձայնության գալու համար անգլիական իմպերիալիզմը հոժարությամբ կիսախտի իր միջազգային պարտավորությունները: Լոնդոնը ի-

րազեկ էր այն մասին, վոր նախապատրաստվում էր Ավստրիայի գավթումը, բայց վոչինչ չարեց այն կանխելու համար: Ինտավելին, նա ամեն միջոց ձեռք առավ, վորպեսզի գավթումն իրականացվի: Ավստրիայի աննեքսիայից հետո Անգլիան նորից համաձայնության է գալիս Գերմանիայի հետ Ավստրիայի ֆրոնտալիստ պարտավորությունների հարցի վերաբերմամբ, համաձայնության է գալիս առանձին և հակառակ մյուս պարտավորների շահերին: Այդ բանակցությունների ժամանակ, վորին ուղեկցում էր դաժան աճուրդը, պարզվեց, վոր հաշվարկումների վերաբերյալ անդր-գերմանական համաձայնությունը Փաշիտական Գերմանիան, վորն այնքան տառապում է իր սպառազինումների ֆինանսավորման համար անհրաժեշտ վալյուտայի բացակայությունից, Անգլիայից հասույթ ունի տարեկան ավելի քան 9 միլիոն լիարժեք ֆունտ ստերլինգ:

Ավստրիան դերմանական Փաշիզմի եքստենսիոնիստական քաղաքականության մի ետապն էր միայն: Հերթի դրվեց Չեխոսլովակիան գավթելու հարցը: 1938 թվի մայիսից սկսած չեխոսլովակիան հարցը դառնում է ամենահրատապ և ամենացավոտ հարցը կենտրոնական Յեվրոպայում: Ավստրիայի գավթումը վատացրեց Չեխոսլովակիայի ստրատեգիական դիրքերը և յերկարացրեց նրա սահմանը Փաշիտական Գերմանիայի հետ: Գերմանիան սկսում է տնտեսական ճնշումից, վորչափով վոր նրա ձեռքին են գտնվում բոլոր այն ճանապարհները, վորոնցով անցնում են ապրանքները Չեխոսլովակիայից (այդ ապրանքների համար սովորական, այսպես ասած, փոխադրական կետը Վիեննան էր): Այնուհետև բորբոքվում է «սուղեական շարժումը»: Կարճ ասած, 1938 թ. մայիսին արդեն ստեղծվեց ծայր աստիճան սուր դրություն: Գերմանական Փաշիզմը նախապատրաստում էր «հոփազի վոստյունը», նախապատրաստում էր Չեխոսլովակիայի գինված գավթումը: Ինչպեքը հասունանում էյին, իհարկե, վոչ միանդամից, վոչ հանկարծակի, և դերմանական Փաշիզմը, նախապատրաստելով Չեխոսլովակիայի վրա կատարելիք հարձակումը, անտարակույս, հաշվի յեր առնում և՛ Անգլիայի, և՛ Ֆրանսիայի դիրքը:

Արժե գուղընթացարար հիշել, վոր դեռևս մարա ամսին, Ավստրիայի գավթումից հետո, անգլիական և Ֆրանսական միևնիստրների՝ Լոնդոնում կայացած խորհրդակցությունն անգլիացիները կատեզորիկ կերպով հրաժարվեցին իրենց վրա վերցնել վորեկ պարտավորություն, վոր ապահովեր Չեխոսլովակիայի

անկախութիւնը: Իսկ մարտի 24-ին բրիտանական պրեմիեր Չեմբերլենը պառլամենտում հայտարարեց, վոր Անգլիան կենսական վորեւէ շահ չունի Կենտրոնական Յեմիքոպայում, վոր Անգլիային, իբր հետաքրքրում է յեմիքոպական խաղաղության պահպանումը միայն: Անգլիական «Կոնստիտուցիոնալ Ռեվյու» ժուռնալը, մեկնաբանելով Չեմբերլենի այդ յելույթը, գրում էր.

«Միտք Չեմբերլենը մարտի 24-ին իր ճառի մեջ ժխտում էր, վոր մենք վորեւէ կենսական շահ ունենք Կենտրոնական Յեմիքոպայում, և պնդում էր, վոր մեր գլխավոր շահը—դա խաղաղության պահպանումն է: Այլ կերպ ասած, վոր շափով վոր խաղաղությունը կապահովվի, մեզ համար, եյապես, միևնույն է, թէ ինչ պայմաններով այդ կիրադործվի: Դրանից յենելով, մենք ել հենց պետք է ճշում գործադրենք այն կողմի վրա, վորն ավելի շուտ անձնատուր կլինի, և պաշտպանենք այն կողմը, վորն ավելի շուտ կկուլի: քան թէ կհամաձայնովի վորեւէ «համաձայնության» այլ մեկնաբանություն տալու, բացի իր սեփական մեկնաբանությունից: Յեթե միտք Չեմբերլենը կարծում է, վոր գերմանացիները կկուլեն՝ նրանց բոլոր պահանջները չբավարարելու դեպքում, ապա ուրեմն... պետք է դալ այն յեղրակացության, վոր մենք պետք է ճշում գործադրենք չեխերի վրա, ստիպենք նրանց զիջել, զոհել նույնիսկ իրենց անկախութիւնը»:

Այս հոգիածի հեղինակը քննադատում էր Չեմբերլենի քաղաքականութիւնը և անգլիական կառավարությանը հեգնորեն առաջարկում էր գործողութիւնների հետեյալ ծրագիրը. 1) ճշում գործադրել չեխոյրովակյան կառավարության վրա, վորպետզի նա լիովին բավարարի սուղետա-գերմանական կուսակցության պահանջները և վերջինիս համար ապահովի վճարկան ազդեցութիւն չեխոյրովակյան քաղաքականության վրա. 2) ճանաչել գերմանական կառավարության շահերը Չեխոյրովակիայում և որինական ճանաչել նրա կապը սուղետա-գերմանական կուսակցության հետ՝ հակառակ միջադգային իրաւունքի ընդունված սկզբունքների, վորոնք արգելում են ոտարերկրյա միջամտութիւնը մյուս յերկրի ներքին գործերին. 3) ճշում գործադրել Ֆրանսիայի վրա, վորպետզի լուծի իր դաշինքը Չեխոյրովակիայի հետ: Վորչափով վոր խորհրդային-չեխոյրովակյան օրակտի գործադրութիւնը կախված է Ֆրանս-չեխոյրովակյան պակտը գործադրության մեջ մտցնելուց, Ֆրանսիայի

հրաժարվելու հետեանքը կլինեն Չեխոյրովակիայի ավտոմատիկ մեկուտացումը Ֆրանսիայից և ՌՍՀՄ-ից:

Հոգիածի հեղինակը դժվար թէ կասկածած լինի, վոր նա, հեղնելով, ուրվադձել է Չեխոյրովակիայի նկատմամբ բրիտանական քաղաքականության իսկական ծրագիրը: Յեվ մայիսյան ուրերին անգլիական կառավարութիւնն ամեն տեսակի ճշում էր գործադրում Չեխոյրովակիայի վրա, ձգտելով նրանից զիջումներ ստանալ Ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ: Համենայն դեպս չեխոյրովակյան կառավարութիւնը, վորը մի ժամանակ տատանվեց, ժողովրդական մասսաների ճշման տակ հաստատակամ է վճռական զիրք բունց, մասնակի մորիլիդացիա կատարեց և պաշտպանական այլ միջոցներ ձեռք առավ: Պարզ դարձավ, վոր Չեխոյրովակիան կուլելու յէ, պաշտպանելու յէ իր անկախութիւնը և ազատութիւնը: Չեխոյրովակիայի հաստատակամ գիրքը ազդեցութիւն գործեց նաև Ֆրանսիայի վրա, վորը հայտարարեց, վոր ինքը կկատարի Ֆրանս-չեխոյրովակյան պայմանագրով հանձն առած իր պարտավորութիւնները, այսինքն՝ Չեխոյրովակիային ոգնության կհամարի գերմանական հարձակման դեպքում: Սորհրդային Միութիւնն, ինքնբարձրյան հասկանալի յէ, նույնպես հաստատեց իր անփոփոխ հավատարմութիւնն իր վրա վերցրած պարտավորութիւնների նկատմամբ: Հակառակ աղբեսորի կամքի ու Անգլիայի կամքի, գործել սկսեց խաղաղության կուլելիտիլ պաշտպանության սիստեմը: Ինքն Անգլիան կանգնեց դժվար յերկրնտրանքի առաջ. կամ կապերը խզել Ֆրանսիայի հետ, կամ հրաժարվել Գերմանիայի հետ մոտենալուց: Անգլիան այն ժամանակ Հիտլերին նախադուշացրեց, վոր կոնֆլիկտի դեպքում Անգլիան կարող է լինել գերմանական Ֆաշիզմի հակառակորդների բանակում, և նրան խորհուրդ տվեց, վոր նա «չափավորութիւն» ցուցարբրի: Գերմանական Ֆաշիզմը, դեմ հանդիման մնալով խաղաղասիրական տերութիւնների ճակատի դեմ, հետ նահանջեց, վորովհետև Ֆաշիստական ագրեսորը նույնքան վախկոտ է, վորքան և լսիլը:

Թվում էր, թէ կացութիւնը նպաստավոր է դասավորվում կապը կտրած աղբեսորին կարգի հրավիրելու համար, Չեխոյրովակյան պետութիւնն անկախութիւնը մեկ ընդմիջտ ապահովելու համար: Սակայն հետագա դեպքերը բոլորովին այլ պակեր ներկայացրին:

Հիտլերը բոլոր համապատասխան յեղրակացութիւններն արեց իր ստացած դասից: Նա հետ նահանջեց, բայց միայն նրա

համար, վորտեղի նախապատրաստվի նոր՝ «հովազի վոստյուն» կատարելու: Նա ուժեղ կերպով ավելացնում է ուղղմական պատրաստությունները, պատրաստվում է ոգոստոսի 15-ին նշանակված դորաշարժերին, մորիլիզացիայի յե յենթարկում համարյա 2 միլիոն զինվոր: Նա շտապ կերպով ամրացնում է արևմտյան սահմանը, այնտեղ ստեղծելով լայն արգելված զոնա: Արգելված զոնայում ամբուլթյուններ կառուցելու նպատակն է Ֆրանսիայի համար դժվարացնել Չեխոսլովակիային ոգնություն ցույց տալու հնարավորությունը՝ դերմանական հարձակման դեպքում: Բայց, բացի զուտ ուղղմական պատրաստություններից, դերմանական Ֆաշիզմը զարգացնում է բուն դիվանագիտական գործունեություն, վորի նպատակն է մի կողմից՝ ամրացնել ագրեսիվ բրուկը, նրա մեջ ներդրավել նոր մասնակիցների, իսկ մյուս կողմից՝ պայմաններ ստեղծել, վորոնք կապահովեն թողտվությունը կամ, ծայրահեղ դեպքում, ագրեսորների սրտին այնքան սովորական և սիրալիր «չմիջամտությունը» Անգլիայի և Ֆրանսիայի կողմից: Բնորոշ է (մանրամասն այդ մասին խոսք կլինի ստորև), վոր բրիտանական դիվանագիտությունը, վորն իբր թե, Չեմբերլենի ասելով, Կենտրոնական Յեվրոպայում վորևե կենսական շահ չունի, մայիսյան որերից հետո ցույց է տալիս հանկարծակի ուժեղացած հետաքրքրություն հենց Կենտրոնական Յեվրոպայի նկատմամբ, հետաքրքրություն, վորն իր կոնկրետ արտահայտությունն է դանում շատ ակտիվ դիվանագիտական գործունեություն մեջ:

Գերմանական Ֆաշիզմը ժամանակ չկորցրեց: Նախ, նա միջոցներ ձեռք առավ, վորպեսզի ե՛լ ավելի ամրապնդի համագործակցությունը Իտալիայի հետ և լրացուցիչ սպառնալիք ստեղծի Անգլիայի և Ֆրանսիայի համար: Գերմանական կառավարությունը հրավերով Բեռլին է դալիս իտալական մարշալ Բալբոն: Բեռլինում բանակցություններ են տեղի ունենում ուղղմական համագործակցության մասին ավիացիայի ասպարեղում: Պետք է նշել, վոր Բալբոյի այցելությունը նախորդեցին իտալական դիվանագիտական շտաբի պետ զենեբալ Պարիանիի և իտալական Ֆաշիստական միլիցիայի շտաբի պետ զենեբալ Ռուսսոյի այցելությունները Բեռլին: Միաժամանակ Հիտլերն իր գործակալներին ուղարկում է բոլոր այն փոքր յերկրները, վորոնց նա հույս ունի ներդրավելու իր ազդեցության վոլորտի մեջ: Սկզբում աղմիրալ Ռեդերը, իսկ հետո զենեբալ Բրաուսիչը գնում են Բուդապեշտ: Գյորխնըջ համառորեն «ուսումնասիրում է» Սկանդինավյան: Գերմանական

Ֆաշիզմի հավատարիմ գործակալ լեհական արտաքին գործերի մինիստր Բեկը ուժգին կերպով աշխատում է «չեղզ» բոլի կազմելու վրա, Մերձբալթյան յերկրները դերմանա-լեհական ազդեցության վոլորտի մեջ ներգրավելու վրա: Հունգարական մինիստրներն, իրենց հերթին, հրավիրվում են Հոմ, վորտեղ Սուսոլինին փորձում է գլուխ բերել համաձայնագրություն Հունգարիայի և Հարավսլավիայի միջև, Հունգարիայի և Ռումինիայի միջև: Այլ կերպ ասած, բոլոր միջոցները ձեռք են առնվում, վորպեսզի պայթեցնեն Փոքր Անտանտը: Վերջապես, բոլորը հիշում են հունգարական դիկտատոր Հորտիի նորբս կատարած այցելությունը Բեռլին: Այդ այցելությունը հասցրեց այն բանին, վոր Հունգարիայի և Փոքր Անտանտի միջև նախատեսվող համաձայնությունը ձխողվում է, չնայած վոր Փոքր Անտանտը համաձայնություն է տալիս չեղյալ համարելու Հունգարիայի սպառազինումներին վերաբերող սահմանափակիչ վորոշումները և այլն: Վոչ մի կասկած չկա, վոր Հորտիի Բեռլինում յեղած ժամանակ քննվել է և չեխոսլովակյան պրոբլեմը: Հունգարիայի հետագա վարքագիծը միանգամայն ակներև հաստատում է այդ: Ճիշտ նույնպես էլ դերմանական Ֆաշիստները համաձայնություն են դալիս նաև Լեհաստանի հետ՝ Չեխոսլովակիայի վրա հարձակվելու նրա դերի մասին: Լեհաստանում սկսվում է հակաչեխոսլովակյան կատաղի կամպանիա մամուլում և առաջ է քաշվում Տեչինյան Սիլեզիան խլելու լողունը:

Ինչ վերաբերում է անմիջականորեն Չեխոսլովակիային, ապա հիտլերյան գործակալությունը—հենլեյնականներին դիրեկտիվներ են տրվում սուր կերպով ուժեղացնել քայքայիչ գործունեություն, խառնակություն ստեղծել, պրովոկացիաներ սերմանել և ամեն կերպ սարսուռի յենթարկել բանակցությունները կառավարության հետ, վորը փորձում է խաղաղ կերպով կարգավորել սուրբետական հարցը:

Իսկ ի՞նչպես են այդ բոլորին նայում Անգլիան ու Ֆրանսիան, ի՞նչպես են նրանք վերաբերվում Ֆաշիստական Գերմանիայի գործողություններին, վորը փորձում է չրջապատել, մեկուսացնել Չեխոսլովակիան, պայթեցնել նրան ներսից: Բրիտանական դիվանագիտությունը քնած չի: Նա իր «պոստումն» է, ուժգին հետաքրքրություն է ցուցաբերում նաև Չեխոսլովակիայի նկատմամբ: Այդ հետաքրքրության կոնկրետ արտահայտությունը յեղավ լորդ Ռենսիմենին Պրազա ուղարկելը, վորի միսիան

եր—հաջողեցնել չեխոսյովակյան կառավարութեան կապիտու-
լացիան:

Ռենսիմենին Պրազա ուղարկելու հարցն, ինչպէս հիմա ճը-
զրիտ հայտնի յե, վորոշվել է հուլիսի 20-ին, անգլիական թագա-
վորի Փարիզում յեղած ժամանակ: Այն խորհրդակցութեանը,
վորտեղ ընդունվել է այդ վորոշումը, մասնակցել են անգլիական
արտաքին գործերի մինիստր լորդ Գալիֆաքսը, Ֆրանսական
վարչապէս Դալադեն և արտաքին գործերի մինիստր Բոննեն:
Գալիֆաքսը այդ խորհրդակցութեան ժամանակ զեկուցեց Հիտլե-
րի աշխուտանա Վիդեմանի հետ իր ունեցած զրույցի բովանդա-
կութունը, վորը այցելել էր Լոնդոն՝ անգլիական թագավորա-
կան գույզի՝ Փարիզ մեկնելու նախորդակին: Վիդեմանը Հիտլերի
անունից հաղորդեց, վոր Չեխոսլովակիայի հարցի վերաբերյալ
անգլո-ֆրանսական վորոշումներից է կախված անգլո-զերմանա-
կան հարաբերութեանների ապագան: Այսպէս բացահայտորեն
գրվեց հարցն այն մասին, վոր Չեխոսլովակիան հանդիսանում է
վորպէս մանր գրամ գերմանական և անգլիական իմպերիա-
լիստների միջև տեղի ունեցող աճուրդում:

Անհրաժեշտ է հիշեցնել, վոր Գալիֆաքսի և Վիդեմանի հան-
դիպման հետ համարյա թէ միաժամանակ կայացաւ և մյուս
հանդիպումը—անգլիական պրեմիեր Չեմբերլենի ու Լոնդոնի
գերմանական դեսպան Դիրքսենի միջև: Դիրքսենը առաջ քաշեց
հետևյալ նախագիծը. 1) չորս տերութեանները—Անգլիայի,
Ֆրանսիայի, Իտալիայի և Գերմանիայի կոնֆերենցիայի դումա-
րում Լոնդոնում՝ Չեխոսլովակիայի հարցը կարգավորելու հա-
մար. 2) այդ կոնֆերենցիայում սկզբունքային համաձայնութեան
կայանալու դեպքում քննարկմանը մասնակից դարձնել նույնպէս
և Չեխոսլովակիային. 3) չեխոսլովակյան պրորլեմի կարգավոր-
ման դեպքում սկսել ավելի լայն բանակցութեաններ Գերմանիայի
ոգային սպառազինումների և դադութեային պահանջները հարցի
վերաբերյալ:

Այլ կերպ ասած, Հիտլերը նորից հրապուրեց Չեմբերլենին
«չորսի պակտի» և ոգային պակտի ցնորքով, պահանջելով չեխո-
սլովակյան պրորլեմի՝ իր համար ձեռնտու վորոշումը:

Լորդ Ռենսիմենի «արգասավոր» գործունեութեանը Պրազա-
յում հանրահայտնի յե: Նա հատուկ ուժով և համառութեամբ
շարունակեց այն ճնշումը, վոր գործադրում էին Լոնդոնը և
Փարիզը Պրազայի վրա, աշխատելով նրան ավելի ու ավելի մեծ
զիջումներ անել տալ հենլեյնականներին, այսինքն Հիտլերին:

Վոչ մի կասկած չկա, վոր Ռենսիմենը սերտ կոնտակտ էր պահ-
պանում վոչ միայն հենլեյնականների, այլև ազրարային կու-
սակցութեան այն շրջանների հետ, վորոնք Հիտլերի հետ համա-
ձայնութեան գալու կողմնակիցներ էին և վորոնց միջից հալա-
քազրվել էին հետագայում հայտնաբերված՝ Չեխոսլովակյան
հանրապետութեան դեմ կազմած դավադրութեան կողմնակիցնե-
րը:

Ինքը Ռենսիմենը Չեմբերլենին գրած իր նամակում (սեպ-
տեմբերի 21-ին) բավականին բացահայտ կերպով յերևան է հա-
նում իր անփառունակ միսիայի իսկական նպատակները: Նրա
նամակից յերևում է, վոր հենլեյնական մի շարք լիդերներ պատ-
րաստ էին համաձայնելու սուղետական պրորլեմի լուծմանը Չե-
խոսլովակյան պետութեան շրջանակներում: Սակայն Ռենսիմենը
արտահայտվեց հոգուտ այն բանի, վոր տերիտորիայի մի մասը
տրվի Գերմանիային, և ակնարկեց հենլեյնականների լիդերնե-
րին, վոր հարցն անհրաժեշտ է լուծել վոչ Չեխոսլովակյան պե-
տութեան շրջանակներում, քանի վոր «հարցի նման լուծումը կլի-
ներ ժամանակավոր միայն»: Յեվ, այնուամենայնիվ, հենց նույն
Ռենսիմենը հարկադրված էր ընդունել, վոր չեխոսլովակյան կա-
ռավարութեան հետ հարաբերութեանների խզման պատասխա-
նատվութեան ընկնում է Հենլեյնի վրա:

Ռենսիմենի միսիան ձախողվեց, վորովհետև Հիտլերը յեր-
բեք չէր ուզում սուղետական պրորլեմի վոչ մի խաղաղ կարգա-
վորում: Դարձյալ ու գարձյալ հատատվեց, վոր զիջումների
բաղաբականութեանը տանում է դեպի ազրեսորի պահանջների
տճումը միայն: Սկզբում հենլեյնականները պահանջում էին կա-
ռավարութեան կողմից մշակված «ազգային կողեքի» շուտա-
փուլի ջննարկումը: Հետո նրանք պահանջեցին հետաձգել և ու-
ռաջ քաշեցին իրենց հակամախազիծը, վորը պարունակում էր
կառավարութեան համար անընդունելի պահանջներ: Կառավարու-
թեանը համաձայնեց հենլեյնականների հուշադիրն ընդունել վոր-
պէս հիմք դիսկուսիայի համար: Բայց այդ էլ չբավարարեց հեն-
լեյնականներին: Նրանք հայտարարեցին, վոր իրենց կարող է
բավարարել ախրահուշակ «կառնարդյան ծրագրի» պահանջների
լիակատար ընդունումը միայն: Իսկ Կառնարդի ծրագիրը, ինչ-
պէս հայտնի յե, նախատեսում էր վոչ միայն Սուղետիայի լիա-
կատար ավտոնոմիա, այլև Չեխոսլովակիայում ապրող գերմա-
նացիների, այսպէս կոչված, «անհատական ավտոնոմիա» (այսին-
քը՝ Չեխոսլովակիայում ապրող յուրաքանչյուր գերմանացի

յենթարկվում և վոչ թե կառավարութանն, այլ «Ֆյուրերին», այսինքն Հենլեյնին), և այլն և այլն: Բայց կառավարութան կողմից կառուցարարան ծրագրի համարյա բոլոր 8 կետերն ընդունելը նույնիսկ չբավարարեց Հենլեյնականներին: Նրանք պահանջեցին «պլեբրիստ» (հանրաքվե) և, վերջապես, պարզապես ու կռակա կերպով խղեցին բանակցությունները: Միանգամայն ակնհայտ դարձավ այն, վորը շուտով փաստերով հաստատվեց, այսինքն՝ բանակցությունների ամբողջ այդ կռակիս բեմադրվեց նրա համար, վորպեսզի ժամանակ շահեյին և հող նախապատրաստեյին գերմանական գործերի՝ Չեխոսլովակիա ներխուժելու համար:

Նյուրնբերգում բացվեց Փաշխտական «Համագումարը»: Սեպտեմբերի 12-ին Հիտլերն արտասանեց իր ճառը, — դա մի ահագանք էր, վորից հետո Սուդետի մարզում բռնկվեց Հենլեյնական պուտչ: Ռենսիմենն այլևս դործի չէր: Բոլոր խաղաթղթերը բացվեցին: Ամեն ինչ պարզվեց: Չեխոսլովակյան կառավարությունը չէր կարող արդեն համաձայնել վորևէ զիջումների: Նրա ոռաջ ծառայցավ պուտչը լիկվիդացիայի յենթարկելու խնդիրը: Պուտչը լիկվիդացիայի յենթարկվեց, և Սեբեյում, Հենլեյնականների շտաբ-բնակարանում բռնված փաստաթղթերը հաստատեցին Չեխոսլովակյան հանրապետության դեմ սարգված դավադրության առկայությունը: Հենլեյնը և նրա թևարկյալները դուրս յեկան խոսվության կազմակերպիչներ, վորոնք գտնվում էյին Փաշխտական Գերմանիայի հետ մշտական կապակցության մեջ, այնտեղից ստանալով փող և զենք: Չեխոսլովակյան կառավարությունը հայտարարեց Հենլեյնին պետական դաժձան և հրաման արձակեց նրան ձերբակալելու մասին: Ամբողջ Ժողովուրդը վճռականապես հավանություն տվեց այդ միջոցառումներին: Սակայն, ինչպես հետո պարզվեց, ձեռք էյին առնվել ամենևին էլ վոչ բոլոր միջոցները: Ներքին գործերի միտտորությունը լիկվիդացիայի չէր յենթարկել Հենլեյնականներին բազմաթիվ բներ, թեպետև դիտեր նրանց զոյության մասին: Այսպես թե այնպես, պուտչը չհաջողվեց: «Բոպանական վարիանտը» տապալվեց:

Թվում էր, թե այդ մոմենտին, յերբ վերջնականապես արդեն բացված էր Փաշխտաների ամբողջ խաղը, Չեխոսլովակիան իրավունք ուներ պաշտպանություն գտնելու Անգլիայի և Ֆրանսիայի կողմից, վորոնք նրան դրդում էյին զիջումներ անելու պետական դավաձաններին և հայրենիք մասնողներին: Յեկ վսշ մի կասկած

չկա, վոր յեթե այդ մոմենտին մի ծանրակշիւ խոսք ասվեր, Լոնդոնից և Փարիզից լավեր մի ահեղ բղավոց՝ հաստատված վճռական գործողություններով, Հիտլերը նորից հետ կնահանջեր:

Իսկ ի՞նչպիսի վերաբերմունք ցույց տվեց Լոնդոնը ստեղծված դրությանը: Տեղի ունեցավ միտտը Չեմբերլենի առաջին «դրամատիկական թուիչքը» դեպի Գերմանիա: Այդ թուիչքը պատկերացվեց վորպես «խաղաղարարական» ժեստ, վորպես խաղաղությունը փրկելու կրկնակի ջանք: Բուրժուական մամուլի ջանքերով հասարակական կարծիքը բավական ճարպիկ կերպով մշակվեց, և շատ միամիտ մարդիկ իսկապես հավատացին, թե Չեմբերլենը սլացավ խաղաղությունը փրկելու: Մոտակա որերը ցույց տվին այս հաստատման ամբողջ անմտությունը, յերևան հանեցին բրիտանական դիվանագիտության ամբողջ կեղծավորությունը:

Չեմբերլենը սլացավ Գերմանիա, վորպեսզի փրկի վոչ թե խաղաղությունը, այլ ազրեսորներ հետ համաձայնության դալու իր քաղաքականությունը, փրկի հենց իրեն Հիտլերին, վորը կարող էր ընկնել դժվարին դրության մեջ, յեթե նորից, ինչպես մայիսին, գործողության մեջ դրվեր խաղաղության կոլեկտիվ պաշտպանության սիստեմը: Բերխտեղադենից բրիտանական պրեմյերը բերեց Հիտլերի պահանջները: Փաշխտական դիկտատորը համառորեն պահանջում էր, վորպեսզի Գերմանիային միացվեն Սուդետական մարզի այն շրջանները, վորտեղ գերմանական բնակչությունը կազմում է 50%-ից ավելի, և հանրաքվե անցկացնել այն շրջաններում, վորտեղ գերմանական բնակչությունը 50%-ից չի անցնում: Բացի դրանից, նա պահանջեց Չեխոսլովակիայի արտաքին քաղաքականության որինետացիայի փոփոխություն, այսինքն՝ առաջին հերթին Ֆրանսիայի և ՍՍՀՄ հետ կնքված փոխադարձ ոգնության վերաբերյալ պայմանագրերի լուծարքը: Այդ պահանջները վրդովմունք առաջ բերին Չեխոսլովակիայում և Անգլիայի ու Ֆրանսիայի ամենալայն հասարակական շրջաններում:

Չեմբերլենը Լոնդոն վերադառնալով, այնտեղ հրավիրեց Ֆրանսական պրեմյեր Դալադեյիսին և արտաքին գործերի միտտար Բոննեյսին: Միտտեղ խորհրդակցությունում մշակվեց տիրաճուգի անդր-Ֆրանսական պլանը, վորը փաստորեն նախատեսում էր Հիտլերի բոլոր պահանջներին բավարարումը: Այդ պլանի համաձայն Գերմանիային պետք է անցնեյին Սուդետական մարզի՝ 50%-ից ավելի գերմանական բնակչություն ունեցող

գերմանական շրջանները, խառը բնակչություն ունեցող մյուս շրջաններում յենթադրվում էր հանրաքվե անցկացնել: Այնուհետև պլանը նախատեսում էր Ֆրանս-չեխոսլովակյան և խորհրդային-չեխոսլովակյան փոխադարձ ոգնության պակտի վոչնչացումը: Վորպես փոխհատուցում՝ պլանը նախատեսում էր չեխոսլովակյան սահմանների վերաբերմամբ յերաշխիքներ նրա հարևաններին—Գերմանիայի, Հունդարիայի, Լեհաստանի և Ռումինիայի կողմից: Բացի դրանից, նախատեսվում էր նույնպես գեր-յերաշխիք Անդլիայի ու Ֆրանսիայի կողմից:

Այդ պլանի բովանդակությունը պաշտոնապես շարադրված էր հետևյալ կերպ.

1. Սուսնց հանրաքվեյի Գերմանիային հանձնել այն շրջանները, վորտեղ գերմանացիները կազմում են բնակչության 50%-ից ավելին: Նախատեսվում է, վոր սահմանների ճշգրտումն այն դեպքերում, վորտեղ այդ անհրաժեշտ կլինի, կատարվի միջազգային հանձնաժողովի կողմից՝ նրա մեջ մասնելով Չեխոսլովակիայի ներկայացուցչին:

2. Գերմանական և չեխոսլովակյան բնակչության փոխադարձ հայրենադարձումը (репатриация) այդ բնակչության ազատ կերպով արտահայտված կարծիքի հիման վրա՝ վորոչ ժամանակամիջոցի ընթացքում:

3. Յեթե չեխոսլովակյան կառավարությունը պատրաստ է այդ միջոցները ձեռք առնելու, վորոնք իրենց հետ առաջ կրերեն Չեխոսլովակյան պետության գոյության պայմանների փոփոխություն, ապա չեխոսլովակյան կառավարությունը կարող է հարց դնել իրեն հավաստիացումներ տալու մասին՝ Չեխոսլովակիայի անվտանգությունն ապագայում ապահովելու նպատակով:

4. Միջազգային յերաշխիքները, վորոնք ապահովելու յեն Չեխոսլովակյան պետության անկախությունն ամեն տեսակ ագրեսիաների դեպքում, պետք է փոխարինեն գոյությունն ունեցող պայմանադրերը, վորոնք կնքված են չեխոսլովակյան կառավարության կողմից ռազմական բնույթի փոխադարձ ոգնության մասին:

5. Անդլիական կառավարությունը պատրաստակամություն հայտնեց մասնակցելու Չեխոսլովակյան պետության այդ նոր սահմանների միջազգային յերաշխիքներին՝ ընդդեմ անտոխթ ադրեսիայի:


Այդ պլանը, վորը ներկայացնում էր խայտառակ դավաճանություն Չեխոսլովակիայի վերաբերմամբ և Անդլիայի ու Ֆրան-

սիայի հանձն առած միջազգային պարտավորությունների և պայմանադրերի խախտում, — բնականաբար բացասական վերաբերմունքի հանդիպեց Չեխոսլովակիայում: Նա առաջ բերեց ամբողջ յերկրում բուռն զայրույթ և բողոքի շարժում Ֆրանսիայում ու Անդլիայում: Յեվ, չնայած դրան, Անդլիան ու Ֆրանսիան ուլտիմատիվ կերպով Չեխոսլովակիայից պահանջեցին այդ պլանի ընդունումը, սպառնալով, վոր հակառակ դեպքում Չեխոսլովակիային ոգնություն չի ցույց արվի, յեթե Գերմանիան նրա վրա հարձակվի: Չեխոսլովակյան կառավարությունն ստիպված յեղավ անձնատուր լինել: Բայց պարզվեց, վոր այդ կապիտուլացիան ևս բավական չէ, վորովհետև ագրեսիոները պահանջներն այդ ժամանակամիջոցում ամեցին: Այդ որերին ուժեղ խորհրդակցություններ եյին տեղի ունենում Գերմանիայի, Լեհաստանի և Հունդարիայի ներկայացուցիչների միջև: Լեհաստանը և Հունդարիան բողոք հայտնեցին այն բանի դեմ, վոր անդլո-ֆրանսական պլանում չի նախատեսված նրանց պահանջները բավարարումը. Լեհաստանինը—Տեչինյան Միլեզիայի վերաբերմամբ, իսկ Հունդարիայինը—Սլովակիայի և Անդլիաբարպտայան Ուկրաինայի վերաբերմամբ: Այդ նույն ժամանակ գերմանական Փաշիստական մամուլում նորից ուժեղացավ կամպանիան ընդդեմ Չեխոսլովակիայի: Գերբերյուր Չեխոսլովակիայի լիակատար վոչրնչացման լողունք նետեց:

Սակայն պլանները չեյին միայն այդ որերին մշակվում: Այդ որերին չեյին դադարում հենլեյնականների պրովոկացիաները: Մոմենտ յեղավ, յերբ Սուդետական մարզի մի շարք քաղաքներ փաստորեն գտնվում եյին Փաշիստական գործակալների ձեռքին:

Չեխոսլովակիայում բարձրացավ ժողովրդական զայրույթի ալիք: Տեղի ունեցան բազմամարդ բուռն ցույցեր: Ճուցարարները գնում եյին դեպի պրեզիդենտի պալատը և դենք եյին սպահանջում հայրենիքի պաշտպանության համար: Գոջայի կառավարությունը չկարողացավ յերկար մնալ իշխանության գլուխ, մանավանդ վոր նրա գոյության վերջին որերին շաարորինակ յերևույթներ տեղի ունեցան: Վոչ միայն զինաթափ շարվեցին բաղձաթիվ հենլեյնական բանդաները, այլև Սուդետական օտոմանի վրա գտնվող չեխոսլովակյան գորքերն անսպասելիորեն հրաման ստացան եվախուացիայի յենթարկվելու—հետ քաշվելու դեպի յերկրի խորքը: Սկսվեց չեխական գորքերի հետխաղացությունը: Փաստորեն Սուդետները համարյա թե մի ամբողջ ոք գտնվում եյին հենլեյնականների ձեռքին: Բայց այդ որը (տեղ-

157
157
39



անժբերի 22-ին) Գոջայի կառավարութիւնը հրաժարական տվեց, և հազմվեց կառավարութիւն՝ գններալ Սիրովիի գլխավորութեամբ: Յեղ նոր կառավարութեան առաջին հրամանը չեխտարովական գործերը վերադարձրեց դեպի Սուրբատական մարզը, վորտեղ արդեն փորձում եյին ներխուժել «կամավորների սուրբայան կորսուած» շոկատները դերմանական գրոհայինների և պահնորդական շոկատների հետ միատեղ:

Գերմանական մամուլը կատաղի վրոնոց բարձրացրեց նոր կառավարութեան դեմ: Նորից լարված դրութիւն ստեղծվեց: Այդ ժոճնատին (սեպտեմբերի 22-ին) Չեմբելները յերկրորդ անգամ թուալ դեպի Գերմանիա՝ Գոզեսերը և բերեց Հիտլերին անդլո-Ֆրանսական պլանը: Բրիտանական պրեմյերը ծանր հիւսթատութիւն ունեցալ, վորովհետև պարզվեց, վոր Փաշլիտտական դիկտատորի համար այդ ղեջումները քիչ են: Նրա պահանջները ցուցակը զգալի չափով աճեց: Հիտլերն իր հուշադրի մեջ պահանջեց Գերմանիային միացնել Չեխոսլովակիայի բաւականաչափ տերիտորիա, անհապաղ հետ քաշել այդ տերիտորիայից չեխոսլովակյան սպառազինված ուժերը, վոստիկանութիւնը, ժանդարմերիան և սահմանային պահնորդութիւնը, այն հաշվով, վորպեսզի այդ տերիտորիան հենց միանգամից ոկուպացիայի յենթարկվի դերմանական բանակի կողմից: Այդ տերիտորիան Գերմանիային պետք է հանձնվի բոլոր տրանսպորտային, ռազմական, արդյունաբերական և այլ կառուցումների հետ միատեղ, ներառյալ նաև անրողրոմները, ռազիտկայանները, յերկաթուղիների շարժական կազմը: Նույնպես պետք է հանձնարվեն պարենը, անասունները և ամեն տեսակ հումութիւնները:

Այնուհետև հուշադիրը պահանջում էր հանրաքվեյի կիրառում Չեխոսլովակիայի՝ խառը բնակչութիւն ունեցող ուրիշ շատ շրջաններում, վերջիններին պետական պահանջութիւնը վորոշելու համար:

Հիտլերի պահանջած տերիտորիաների միացումը Գերմանիային՝ նշանակում էր Չեխոսլովակիային զրկել նրա սահմանային ամրացված շրջաններից, կարևոր արդյունաբերական կենտրոններից, և չենք խոսում այն մասին, վոր Չեխոսլովակիան կորցնում էր այդ դեպքում իր բնական պաշտպանական դիժը, վոր հանդիսանում են Սուրբատական լեռները նրա հյուսիսային սահմաններում:

Հուշադիրը պահանջում էր բոնտարկված բոլոր հենլէյտականներին անհապաղ ազատ արձակել: Միաժամանակ Հիտլերը

գիմեց հետեյալ մանյովրին. նա «վորդրմածաբար» համաձայնում է թույլ տալ «միջադրային վերահսկողութիւնը» հանրաքվեյի կիրառման նկատմամբ և «թույլ է տալիս» միջադրային հանձնաժողովին մասնակցել Չեխոսլովակիայի նոր սահմանների վերջնական վորոշմանը:

Հուշագրին կցվեց մի քարտեղ: Նրա վրա կարմիր գույնով նշված են այն շրջանները, վորոնք պետք է հոկտեմբերի 1-ին անցնեն Գերմանիային, և կանաչ գույնով՝ այն շրջանները, վորտեղ պետք է հանրաքվե կիրառվի:

Բացի դրանից, Հիտլերը պնդում էր, վոր բաւարարեն Հուշագրիայի և Լեհաստանի պահանջները: Հիտլերի չափից գուրս պահանջները չփոթեցրին նույնիսկ Չեմբելներին, և այդ նոր պահանջները հանձնվեցին չեխոսլովակյան կառավարութեան՝ արդեն առանց դրանք անպայման ընդունելու հանձնարարութեան:

Հիտլերի սպառնալիքի կապակցութեամբ չեխոսլովակյան կառավարութիւնը հրաման արձակեց ընդհանուր մորելիդացիայի մասին: Այդ միջոցն ամենալայն հավանութիւն գտալ ժողովրդի կողմից: Բաւական է ասել, վոր մորելիդացիան կատարվեց փայլուն կերպով և վերջացալ ժամկետից յերկու ժամ շուտ: Ընդվորում բնորոշ է, վոր ազգային փոքրամասնութիւններն ամենաչնչին չափով իսկ չխուսափեցին մորելիդացիայի վերաբերյալ հրամանը կատարելուց և այսպիսով հայտարարեցին իրենց լիակատար պատրաստականութեան մասին՝ պաշտպանելու հանրապետութեան ազատութիւնը և անկախութիւնն ընդդէմ Փաշլիտտական լծի: Հետաքրքրական է նաև այն, վոր Լոնդոնն ամենևին չէր առարկում Չեխոսլովակիայում կատարվող մորելիդացիայի դեմ:

Լոնդոն ժամանեցին Դալադյեն և Բոննեն՝ խորհրդակցութեան: Հիտլերի ուրիմատումը ճանաչվեց վորպես անընդունելի: Չեխոսլովակյան կառավարութիւնը մերժեց այն: Մոճնտ յեղալ, յերթ թվում էր, թե Ծրանտան և Անգլիան բռնել են, վերջապես, ամուր գիրք և չեն գիշի ազրեսորին: Դեպքերի հետաքրքրազարգացումը, սակայն, ցույց տվեց, վոր Չեմբելները ազրեսորի հետ համաձայնութեան գալու իր քաղաքականութեանից հետ չի կանգնել:

Հիտլերյան հուշագրի մերժումը, Անգլիայի և Ծրանտայի քացառական վերաբերմունքը նրա նկատմամբ՝ Փաշլիտտական «Փյուրերին» վորոշ չփոթութեան հասցրին: Սեպտեմբերի 20-ին նա «Ապորա-Պարաս»-ում հանդես յեկալ մի ճառով, վորի մեջ, լեռ-

յամ Չեխոսլովակիայի դեմ ուղղված հարձակումներին, ակնհայտորեն վախկոտ նոտաներ ելին հնչում: Նա ամեն կերպ յերդվում էր, թե ինքը հավատարմորեն ձգտում է բարեկամություն պահպանելու Անգլիայի հետ, հավատացնում էր, թե մտադիր չէ վտանգվածություն անել Ֆրանսիայի սահմանների վերաբերմամբ, և հաստատում էր, թե Սուդետները—նրա վերջին տերիտորիալ պահանջն են Յեվրոպայում:

Անկասկած, յեթե Անգլիան և Ֆրանսիան այդ մոմենտին վճռականապես հայտարարեին, վոր խոսք անգամ չի կարող լինել հետագա վորևէ գիշումների մասին, գերմանական ագրեսորը հետ կնահանջեր: Բայց Հիտլերը հաստատապես հույս էր դրել, վոր նրան ոգնության ձեռք կմեկնվի: Յեվ Չեմբերլենը չդանդաղեց այդ անել, Հիտլերին դիմելով անձնական նամակով, վորի մեջ ահնարկում էր, թե պատրաստ է համաձայնելու լրացուցիչ գիշումներին:

Ստանալով Չեմբերլենի նամակը, Հիտլերը հասկացավ, վոր խաղը կարելի չէ շարունակել, ուժեղացրեց ճնշումն Անգլիայի, Ֆրանսիայի և Չեխոսլովակիայի վրա: Չեմբերլենին գրած իր պատասխան նամակում Հիտլերը հայտարարեց, վոր իր ուլտիմատումի սկզբնական ժամկետը նա կրճատում է և պահանջում է, վոր չեխոսլովակյան կառավարութունը նրա ուլտիմատումին պատասխան տա վոչ թե հոկտեմբերի 1-ին, այլ սեպտեմբերի 28-ին, ժամի 12-ին: Պատասխան չստանալու դեպքում կհայտարարվի ընդհանուր մորիլիդացիա, և գերմանական զորքերը կշարժվեն դեպի Սուդետական մարզը:

Ներկայացնելով այդ նոր ուլտիմատումը, գերմանական Ֆաշիստները հենց այդտեղ ևեթ վախեցան և լուր տարածեցին, վոր Հիտլերը պատրաստ է իր ուլտիմատումը հետաձգելու մեկ օրով: Լոնդոնում հասկացան, թե ինչումն է այդ մանյովրի իմաստը: Բայց ոչտաք է ասել, վոր այդ ժամանակ արդեն կատարվել էր ամբողջ անգլիական նավատորմի մորիլիդացիա, Ֆրանսիայում կիրառվեցին մի շարք պաշտպանական միջոցներ, այդպիսի միջոցներ ձեռք առան և համարյա թե բոլոր յեվրոպական պետութունները: Չեմբերլենը նորից նախաձեռնութուն հանդես բերեց և նորից ոգնության ձեռք մեկնեց Հիտլերին: Այսպես ծընվեց Մյունխենում «չորսի կոնֆերենցիան» գումարելու գաղափարը, այն կոնֆերենցիան, վորին այնպես սիրով համաձայնեց Հիտլերը. նա, ասենք, արդեն հաստատապես գիտեր, վոր ռազմական կոնֆլիկտի չի դիմի, յեթե իրական գուրո գա այն

պայտեալիքը, թե Ֆրանսիան և Անգլիան հանդես են դալու Չեխոսլովակիայի կողմը:

Համաշխարհային հասարակական կարծիքը հրեշային կերպով խաբելը հենց նրանումն էլ կայանում է, վոր Չեմբերլենի և Դալադյեյի կողմնակիցները փորձում են բոլորին հավատացնել, վոր իբր թե Հիտլերը, միևնույն է, կսկսեր պատերազմել, չնայելով վոչ մի նախազուշացման և սպանալիքի, յեթե նրա պահանջները չբավարարվեին: Իսկ մինչդեռ չկա և չի կարող վոչ մի կասկած լինել այն բանում, վոր յեթե Հիտլերը հաստատ համոզված լիներ, վոր Ֆրանսիան և Անգլիան իսկապես հանդես կգան Չեխոսլովակիային պաշտպանելու, վոր գործադրության մեջ կդրվի կոլեկտիվ անվտանգության սխտեմը և ագրեսիայի գոնի պաշտպանութունը, նա յերբեք սիրտ չեր անի բացելուց հարձակվելու Չեխոսլովակիայի վրա:

Ուստի միանգամայն անհիմն ու կեղծ են այն հայտարարութունները, թե Մյունխենի խորհրդակցութունը կանխեց պատերազմը: Նա չկանխեց պատերազմն, ընդհակառակը, նա ամենապաժան հարվածը հասցրեց խաղաղությանը և անվտանգությանը:

«Չորսի կոնֆերենցիան» Մյունխենում ընդունեց հետևյալ վորոշումները.

Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան և Իտալիան կնքեցին համաձայնութուն, վորը նախատեսում է չեխոսլովակյան զորքերի եվակուացիայի սկիզբը՝ Սուդետական մարզի այն շրջաններից, վորտեղ գերակշռում է գերմանական բնակչութունը՝ հոկտեմբերի 1-ին և զորքերի լիակատար հեռացումը հոկտեմբերի 10-ին: Հանրաքվեյի հարցի մասին մնացած շրջաններում, վորտեղ գերմանական բնակչութունը մեծամասնութուն չի կազմում, վորոշվում է միջազգային հանձնաժողովի կողմից: Հենց այդ հանձնաժողովն էլ կվորոշի և Չեխոսլովակիայի նոր սահմանները: Հանձնաժողովի կազմի մեջ պետք է մտնեն Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության պետական քարտուղարը, Բեռլինի Ֆրանսական, անգլիական և իտալական դեսպանները և Չեխոսլովակիայի ներկայացուցիչը:

Համաձայնութունը նախատեսում է, վոր եվակուացիայի յենթակա շրջաններում գոյութուն ունեցող վոչ մի ամբողջութուն չպետք է քանդվի: Սուդետական մարզի սկուպացիան գերմանական զորքերի կողմից պետք է կատարվի չորս նվազ: Այն շրջանները, վորտեղ հանրաքվե չէ տեղի ունենալու, պետք է մտցվեն միջազ-

դային զորքեր, վորոնք այնտեղ կմնան ընդհուպ մինչև հանրա-
քվեյի վերջնապլը: Միջադրային հանձնաժողովը պետք է ամսա-
թիվը վորոշի, թե յերբ և ամսալ շրջանում տեղի ունենալու
հանրաքվեն: Սակայն համաձայնությունը նախատեսում է, վոր
հանրաքվեն բոլոր շրջաններում պետք է կնայնա նոյեմբերի վեր-
ջից վոչ ուշ: Բնակչությանը հայրենադարձման իրավունքը կտրվի
վեց ամսվա ընթացքում:

Համաձայնությունը պարտավորեցնում է չեխոստովակյան
կառավարությանը՝ ամսալ համաձայնությունը կնքվելու օրից
հաշված չորս շաբաթվա ընթացքում ազատել զինվորական և
վոստիկանական պարտականություններ կրելուց սուգետական այն-
բոլոր գերմանացիներին, վորոնք այդ ցանկությունը կհայանեն:
Նույն այդ ժամկետի ընթացքում էլ չեխոստովակյան կառավար-
ությունը պարտավոր է ազատ արձակել սուգետական բոլոր այն
գերմանացիներին, վորոնք դատապարտված են քաղաքական մո-
տիվներով:

Անդլիան և Ֆրանսիան հանձն են առնում Չեխոստովակիայի
նոր սահմանների յերաշխիքը՝ անառիթ ազրեսիայի դեպ-
քում: Գերմանիան և Իտալիան, իրենց հերթին, Չեխոստովա-
կիայի նոր սահմանների յերաշխիք են խոստանում, բայց միայն
այն բանից հետո, յերբ կկարգավորվի լեհական և հունգարա-
կան փոքրամասնությունների վերաբերյալ հարցը:

Այն դեպքում, յեթե Չեխոստովակիայի լեհական և հունգար-
ական փոքրամասնությունների վերաբերյալ հարցը չի կարգա-
վորվի յերեք ամսվա ընթացքում՝ շահագրգռված տերություն-
ների համաձայնությամբ, Մյունխենի խորհրդակցության մաս-
նակիցները նորից կհավաքվեն այդ հարցի ջննարկման համար:

Ի՞նչ են նշանակում գործնականում մյունխենյան կոնֆերենցիա-
յի վորոշումները: Նրանք նշանակում են, վոր գերմանական Փա-
շիզմի ձեռքն է անցնում Չեխոստովակիայի պաշտպանության ա-
ռաջին դիժը, վոր վիժում է Յեվրոպայում դոյություն ունե-
ցող անվտանգության սիստեմը, վոր միջադրային պայմանա-
դրերը և պարտավորությունները թղթի կտորտանքի յեն վերած-
վել, վոր գերմանական Փաշիզմի առաջ բաց է Չեխոստովակյան
հանրապետության լիակատար ստրկացման ուղին:

Չեխոստովակիան հանդիսացավ մանր դրամ Գերմանիայի
և Անդլիայի միջև տեղի ունեցող աճուրդում: Այդ բավականա-
չափ ցինիկ կերպով հաստատեցին իրենց միատեղ գեկլարացիա-
յում Չեմբեռլենը և Հիտլերը: Այդ գեկլարացիայում նրանք

հայտարարում են, վոր անդլո-գերմանական հարաբերություն-
ները առաջնակարգ նշանակություն ունեն Յեվրոպայի համար,
վոր չեխոստովակյան պրորլեմի լուծումը և անդլո-գերմանական
ծովային համաձայնությունը հանդիսանում են վորպես վկա-
յություն յերկու պետությունների՝ իրար հեռ չկուվելու ցան-
կության:

Անդլո-գերմանական գեկլարացիայի լույսի տակ հատկապես
պարզ է դառնում անդլիական կառավարության դավաճանական
տակտիկան Չեխոստովակիայի նկատմամբ: Բերխտեսդադենից Չեմ-
բեռլենը դիմում է Չեխոստովակիային և կոչ է անում «միջադե-
պեր չստեղծել»: Այդ պետք է, իբր, ամբացներ նրա դիրքը Հիտ-
լերի հետ վարած բանակցություններում: Գոյեպրեզի բանակ-
ցությունների ժամանակ բրիտանական դիվանագիտությունը
հայտարարում է, վոր չի առարկում ընդգեմ Չեխոստովակիայի
մորիլիզացիայի: Այդ վերստին պետք է ամբացնի Չեմբեռլենի
դիրքը: Ստանալով հիտլերյան հուշագիրը, անդլիական դիվա-
նագիտությունը այն հանձնում է չեխոստովակյան կառավարու-
թյանը և հայտարարում, վոր չի կարող խորհուրդ տալ վոչ
այն ընդունել, և վոչ էլ մերժել: «Չորսի կոնֆերենցիայից» հետո
Չեխոստովակիային ներկայացվում է ազրեսորի պահանջները
բավարարելու պլան՝ փաստորեն անդլո-Ֆրանս-իտալո-գերմանա-
կան ուլտիմատումի ձևով:

Չեխոստովակիան թանգ վճարեց բրիտանական իմպերիալիզ-
մի՝ գերմանական Փաշիզմի հետ համաձայնության գալու հա-
մար: Բայց միայն Չեխոստովակիան չէ. Չեխոստովակիան Փրան-
սական ազրեսության վերջին հենակետն էր կենտրոնական Յեվ-
րոպայում, մյունխենյան կոնֆերենցիան լուծարքի յենթարկեց
այդ կետը: Դրանով իսկ Ֆրանսիայի անվտանգությանը նույն-
պես ամենալուրջ հարվածն է հասցված:

«Չորսի կոնֆերենցիայում» քննարկվեց վոչ միայն Չեխո-
ստովակիայի հարցը—քննարկվեց նույնպես Միջերկրական ծովի
պրորլեմը և Իսպանիայի հարցը: Չեխոստովակյան հարցի վերա-
բերմամբ ընդունված վորոշումների բնույթը լիակատար հնարա-
վորություն է տալիս պատկերացնելու, թե ինչ պլանով է ընթա-
ցել իսպանական հարցի քննարկումը:

Բնորոշ են այն փորձերը, վորոնցով ուզում է յին վորևե
ճանապարհով, թեկուզ զարտուղի կերպով դեպի մյունխենյան
խայտառակ համաձայնությունը քաշել Խորհրդային Միությա-
նը—այն միակ մեծ տերությանը, վորը հետևողականորեն և

անշեղորեն պայքարում է ընդհանուր խաղաղության համար, վորը վորք յերկրներին անկախության անշահախնդիր բարեկամն է ու պաշտպանը, վորն իսկական մարտիկն է ազրեսորի դեմ:

Համապատասխան ծխածածկույթ բաց թողնելու համար մոբիլիզացիայի յեն յենթարկվում կապիտալիստական զանազան հեռազրահական զործակալությունների գրչակներ: Որինակ, «Յուրաքանչեղ Պրեսս» զործակալության փարիզյան թղթակիցը հազորդում էր Նյու-Յորք, վոր իբր թե ԽՍՀՄ-ի կառավարությունը լիազորել է Դալադեյեյին հանդես գալ Մյունխենի «չորսի կոնֆերենցիայում» Խորհրդային Միության անունից, թեպետ և պարզապես հայտնի չէր, վոր այդ սուտ է: Խորհրդային կառավարությունը, հասկանալի չէ, վոչ մի լիազորություն չի տվել պ. Դալադեյեյին, նմանապես և չի ունեցել և չունի վոչ մի առընչություն Մյունխենի կոնֆերենցիայի նկատմամբ և նրա վորոշումների նկատմամբ:

Անշղո-Ֆրանսական սեակցիան վախենում է Ֆաշիզմի, հեռահեղափոխության այդ հենարանի, կրախից և համաձայնում է ամեն տեսակ զիջումների, հաստատելով, վոր թողտվության և ազրեսորի հետ համաձայնության գալու այդ քաղաքականությունն իսկ հանդիսանում է «պայքար խաղաղության համար»: Չեմբեռներ և նրա Ֆրանսական բարեկամները զոհարեցում են վոչ միայն թույլ և վորք ժողովուրդների շահերը, այլև իրենց ներկայացրած պետությունների շահերը:

Եարունակ նորանոր կոնֆլիկտներ, պատերազմը Չինաստանում և Իսպանիայում—ուղղակի արդյունք են իմպերիալիստների միջև հակասությունների սրման: Այդ պատերազմների և կոնֆլիկտների պրակտիկան ցույց տվեց, վոր ազրեսորների ախորժակները աճում են ուղիղ համեմատական այն զիջումներին, վոր նրանք ստանում են: Մյունխենյան կոնֆերենցիայի վորոշումները—չպետք է աչքերը փակել դրա հանդեպ—նշանակում են գերմանական ազրեսորի ուժեղացում: Իսկ ո՞ւմ հաշվին կատարվեց այդ ուժեղացումը: Առաջին հերթին Ֆրանսիայի և Անգլիայի հաշվին: Հասարակ տրամաբանությունը խոսում է հոգուտ այն բանի, վոր վորքան ուժեղ լինի ազրեսորը, այնքան ավելի մեծ պահանջներ նա կներկայացնի: Յեվ յեթե հիմա այդ պահանջները բավարարվում են վորք ու թույլ յերկրների հաշվին, ապա արդեն հեռու չէ այն մոմենտը, յերբ կծառանա՝ ազրեսորի պահանջներն անմիջականորեն իրենց, այսպես կոչված, բուրժուական-դեմոկրատական մեծ տերությունների հաշվին բա-

13

վարարելու հարցը: Հենց դեպի այդ է տանում Չեմբեռների և նրա Ֆրանսական բարեկամների քաղաքականությունը: Քանդելով կոլեկտիվ անվտանգության սխտեմը, Անգլիան և Ֆրանսիան քայքայում են հենց իրենց սեփական դիրքերը և մոտեցնում են հատուցման ժամկետները՝ ազրեսորի հետ համաձայնության գալու իրենց քաղաքականության համար:

Միայն Խորհրդային Միությունը անիովիտ միևնույն դիրքը բունց Չեխոսլովակիայի հարցում—խաղաղության ապավենի և ազրեսիայի դեմ մարտիկի դիրքը: ԽՍՀՄ դիրքը սպառիչ կերպով ձևակերպվել է ընկ. Լիտվինովի յերկու հայտարարությունների մեջ՝ Ազգերի լիգայի պլենումում—սեպտեմբերի 21-ին և Լիգայի 6-րդ քաղաքական հանձնաժողովում—սեպտեմբերի 23-ին: Խորհրդային ժողովուրդի առաջին հայտարարությունն ասում է.

«Յերբ իմ՝ Ժընեվ մեկնելուց միքանի որ առաջ Ֆրանսական կառավարությունն առաջին անգամ դիմեց մեզ՝ հարցում անելով մեր դիրքի մասին Չեխոսլովակիայի վրա հարձակում կատարելու դեպքում, յես իմ կառավարության անունից ավի միանգամայն պարզորոշ և աներկիմաստ պատասխան, այն է՝ մենք մտադիր ենք կատարելու ըստ պակտի ունեցած մեր պարտավորությունները և Ֆրանսիայի հետ միասին Չեխոսլովակիային ոգնություն ցույց տալու մեզ մասչելի ուղիներով: Մեր ուղմական գերատեսչությունը պատրաստ է անմիջապես մասնակցելու խորհրդակցությանը Ֆրանսական և չեխոսլովակյան ռազմական գերատեսչությունների ներկայացուցիչների հետ՝ մոմենտի թիլադրած միջոցառումները քննարկելու համար: Անկախ գրանցից՝ յերբ ցանկալի կհամարենք, սակայն, հարցի դրումը Ազգերի լիգայում առայժմս գոնև Ա հոդվածի մասին՝ նպատակ ունենալով, առաջին, մորիլիզացիայի յենթարկելու հասարակական կարծիքը և, յերկրորդ, պարզելու մի քանի այլ պետությունների դիրքը և նրանց հնարավոր ակտիվ կամ թեկուզ պասիվ ոգնությունը: Անհրաժեշտ է, սակայն, նախ, սպառել զինված կոնֆլիկտի կանխման ըտլոր միջոցները, և այդ միջոցներից մեկը մենք համարում ենք յեվրոպական մեծ պետությունների և մյուս շահագրգռված պետությունների անհապաղ խորհրդակցությունը՝ կոլեկտիվ զործողությունների եվենտուալ (հայանական) մշակման համար:

Ահա թե ինչ էր ասում մեր պատասխանը: Միայն յերբ որ սրանից առաջ չեխոսլովակյան կառավարությունն առաջին տե-

զամ հարցում արեց խորհրդային կառավարութեանը, թե նա պատրաստ է արդյոք, համապատասխան չեխոսլովակյան պակտի, ցույց տալու անհապաղ և գործուն ողնություն Չեխոսլովակիային այն դեպքում, յետե Ծրանսիան, հավատարիմ մնալով իր պարտավորություններին, ցույց տա նույնպիսի ողնություն, և գրան խորհրդային կառավարությունը տվեց միանգամայն պարզ ու դրական պատասխան: Յես կարծում եմ, վոր կհամաձայնվեն, վոր դու միջադրային համաձայնութեան լոյսը մասնակցի և Ազգերի լիգայի հավատարիմ պաշտպանի պատասխան եր: Մեղքը մերը չէ, յետե մեր ստաջարկություններին ընթացք չարվեց, վորոնք,—յես համոզված եմ,—կարող եյին ցանկալի արդյունքներ տալ ինչպէս Չեխոսլովակիայի, այնպէս ել ամբողջ Յեվրոպայի և ընդհանուր խաղաղութեան ոգտին: Դժբախտաբար, ընդունվեցին այլ միջոցառումներ, վորոնք հասցրին, և չեյին կարող չհասցնել, այնպիսի կապիտուլացիայի, վորը վաղ թե ուշ կունենա միանգամայն անսահման կատաստրոֆիկ հետեանքներ»:

Ընկ. Լիտվինովի յերկրորդ հայտարարությունն ասում եր,

«Արդեն՝ գերմանո-անգլո-ֆրանսական ուլտիմատումը նրա կողմից ընդունվելուց հետո, նա (չեխոսլովակյան կառավարութեանը: Խմբ.) հարցում արեց խորհրդային կառավարութեանը.—ինչպիսի դիրք կընդի վերջինս, այլ կերպ ասած, արդյոք նա իրեն դեռևս կհամարի կարված չեխոսլովակյան-խորհրդային պակտի հետ այն դեպքում, յետե Գերմանիան ներկայացնի նոր պահանջներ և անհավոթյան մատնվեն անգլո-գերմանական բանակցութեանները և յետե Չեխոսլովակիան վորոչի գեներ ձեռքին պաշտպանել իր սահմանները:

Այդ կրկնակի հարցումը միանգամայն հասկանալի չէ, վորովհետև այն բանից հետո, յերբ Չեխոսլովակիան ընդունեց ուլտիմատումը, վորը պարունակում եր խորհրդային-չեխոսլովակյան պակտի ելեկտուալ գենտնացումը (հրաժարումը) խորհրդային կառավարութեանն, անկասկած, բարոյական իրավունք ուներ նույնպէս անհապաղ հրաժարվել այդ պակտից:

Այնուամենայնիվ խորհրդային կառավարութեանը, վորը պատրվակներ չի փնտաում, վորպէսզի խուսափի իր պարտականութեանները կատարելուց, պատասխանեց Պրաղային, վոր չեխոսլովակյան կառավարութեան մատնանչված պայմաններով Ծրանսիայի կողմից ողնություն ցույց տրվելու դեպքում ուժի մեջ կմտնի խորհրդային-չեխոսլովակյան պակտը»:

Խորհրդային կառավարութեանը բացահայտ կերպով ամբողջ

աշխարհի առաջ հայտարարեց, վոր նա դեմ է Փաշխտական համիչտակիչների ազդեխով մտադրութեաններին Չեխոսլովակյան հանրապետութեան նկատմամբ:

Կոլեկտիվ անվտանգութեան վիժեցման քաղաքականութեանը կիրառում է վոչ միայն չեխոսլովակյան հարցում: Արշալանքն ընդդեմ կոլեկտիվ անվտանգութեան կատարում է թուրք ճակատանցում: Մեպտեմբերի 12-ին ժընեվում դումարվեց Ազգերի լիգայի հերթական պլենումը: Որակարգի հարցերից մեկն ել 16-րդ հոգվածն եր ազդեաորի դեմ սանկցիաներ դործադրելու մասին: Արշալանքը ընդդեմ այդ հոգվածի, վորն ամենակենտունակ ջիղը, ամենադործուն պարագրաֆն է Ազգերի լիգայի կանոնադրութեան մեջ,—սկսվել եր պլենումից դեռևս շատ առաջ: Այդ արշալանքը կազմակերպել էյին վոչ միայն Փաշխտական պետութեանները: Կոպենհագենում կայացած՝ Շվեդիայի, Նորվեգիայի, Դանիայի, Ֆինլանդիայի, Հոլանդիայի, Բելգիայի և Լյուքսեմբուրգի արտաքին գործերի մինիտրների կոնֆերենցիայում վորոշում ընդունվեց, վորով վերոհիշյալ պետութեանները կոլեկտիվ անակցիաներին մասնակցելն իրենց համար պարտադիր համարելուց: Արդեն այն ժամանակ կոնֆերենցիայի մասնակիցները հայտարարեցին, վոր նրանք պատրաստվում են այդ հարցը գնելու Ազգերի լիգայում: Հարցը գրվեց: Յեմ սանկցիաների դեմ արշալանքն սկսեց անդիտական պատվիրակութեանը: Նրան միացան, բացի կոպենհագենի կոնֆերենցիայի մասնակիցներից, թուրքերը, իրանցիները, հարավամերիկացիները և այն: Ծրանսական պատվիրակութեանը մի քիչ տատանվեց, բայց հետո անդիտացիների պոչից քաշ յեկավ:

16-րդ հոգվածը լիովին պահպանելու ոգտին արտահայտվեցին ԽՍՀՄ-ն, Իսպանիան, Չինաստանը, Մեքսիկան, Նոր-Չեյանգիան: Վորջափով, վոր հոգվածը կարող է վերացվել միայն այն դեպքում, յետե համապատասխան վորոշում ընդունվի միաձայն, նա ձեականորեն մնում է Ազգերի լիգայի կանոնադրութեան մեջ, իսկ նրա գործնական կիրարկման մասին հոգիվ թե այժմ կարելի կա խոսելու:

Վո՞րտեղից ծագեց վոքը պետութեանների այդ շարժումը հոգվածի դեմ, վորի հիմնական նպատակն եր հենց նրանց շահերի պաշտպանութեանը: Ի՞նչ պատճառներ ծնեցին ինքնասպանութեան այդ քաղաքականութեանը: Չե՞ վոր չեղոթութեան վերաբերյալ վորեւ խոսք, վորով քողարկվում են վոքը

պետութիւնները պատվիրակները, — չի սքողի այն փաստը, վոր փոքր պետութիւնները իրենք հնարավորութիւն չունեն ազրեստ-բից պաշտպանելու իրենց: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր յերբ փոքր պետութիւնը գոչուած է չեղողութիւն քղամիտով, ապա այդ նշանակում է, վոր նա մտադիր է կողմնորոշվելու դե-պի մի կնչ-վոր ուժեղ պետութիւն: Որինակ բերելը դժվար չէ: Ի՞նչպես է, որինակ, Հոլանդիան յենթադրում պահպանել իր չե-գոքութիւնը: Այդ հարցին մի ակնաւոր հոլանդական քաղաքա-կան գործիչ ամերիկյան «Յորեսն Աֆերս» ժուռնալում հետեւյալ կերպ է պատասխանում. «Արտակարգ դեպքերում Հոլանդիան միշտ պաշտպանվել է Անգլիայի կողմից, վորը կրկնապատիկ կարեւոր է համարում ինչպես Հուսիսային ծովի այն կողմում անկախ պետութիւն պահպանումը, այնպես էլ և Մալակկայի նեղուցի ու Ալսարայիայի միջև բանալիքային դիրքի պահպանումը»:

Ազգերի լիզայի և կոլեկտիվ անվտանգութիւն սիտեմի որիենտացիայից դեպի առանձին տերութիւնների հովանաւոր-բումը կամ խոշոր Ֆաշիստական ազրեստրի հետ համաձայնու-թիւն գալու որիենտացիային անցնելը մեծ չափով արդշունք է կոլեկտիվ անվտանգութիւնը վիժեցնելու և փոքր յերկրները շահերին դավաճանելու այն քաղաքականութիւն, վորն այնքան բնորոշ է Անգլիայի ու Յրանսիայի համար և վորն այնքան ցայտուն կերպով յերեւոց Չեխոսլովակիայի որինակից:

Այսպիսով, այստեղ ևս կարելի յե տեսնել, վոր բուրժուա-կան-դեմոկրատական պետութիւնների քաղաքականութիւնը, վորը հիմնված է ազրեստրների հետ համաձայնութիւն գալու վրա, վիժեցնում է խաղաղութիւնը և անվտանգութիւնը, վի-ժեցնում է ազրեստրի և պատերազմի դեմ գործուն և ակտիվ պայքար մղելու հնարավորութիւնը:

Կարելի յե իրեն հարց տալ. ի՞նչն է համենայն դեպս հար-կադրում Անգլիայի ղեկավար շրջաններին վարելու այդ քաղա-քականութիւնը, վորը հակառակ է խաղաղութիւն շահերին և նրա՝ Անգլիայի ազգային շահերին: Չէ՞ վոր վերջիվերջո Հեռավոր Արեւելքում յապոնական ազրեստրան առաջին հերթին հարվածում է Անգլիայի և ԱՄՆ-ի շահերին: Չէ՞ վոր Գերմա-նիայի և Իտալիայի ինտերվենցիան Իսպանիայում՝ սպառնալիք է ստեղծում Յրանսիայի թիկունքին, սպառնալիք Անգլիայի ծովա-յին հաղորդակցութիւններին. — չէ՞ վոր վերջիվերջո Չեխոսլո-վակիային տրված հարվածը փաստորեն նշանակում է այն, վոր Յրանսիան իսովին կորցնում է իր գիրքերը կենտրոնական Յեվ-

յոպայում և իջեցվում է յերկրորդական պետութիւն դրութիւն:

Մինչև այն ժամանակը, յերբ Յրանսիան և Անգլիան վերջ-նականապես յերեւան հանեցին իրենց դիրքը, բոլոր շահա-գրգռված պետութիւնները սպասում էին: Բաւական է ասել, վոր նույնիսկ Իտալիան այնքան էլ վաղուց չէ, վոր արտահայտ-վեց Սուդետական մարզը Գերմանիային միացնելու դեմ: Իսկ ինչ վերաբերում է այնպիսի յերկրների, ինչպիսին Լեհաստանն է, ապա այդ առթիվ անգլիական «Նյու Ստեյտսմեն Էնդ Նեյչէն» շարաթաթերթը գրում էր, վոր Լեհաստանի դիրքն ամբողջապես կախված է Անգլիայից, վորովհետև գնդապետ Բեկը պատրաստ ունի յեհական քաղաքականութիւն յերեք վարիանտ Չեխոսլո-վակիայի վերաբերմամբ. 1) յեթէ Յրանսիան Չեխոսլովակիային ոգնութիւն հասնի, ապա ուրեմն Լեհաստանը գնում է Գերմա-նիայի հետ. 2) յեթէ Յրանսիան ու հետեւապես և ԽՍՀՄ-ն Չե-խոսլովակիային ոգնութիւն հասնեն, ապա ուրեմն, Լեհաստանը մնում է չեղոք: 3) Իսկ յեթէ Անգլիան միանա Յրանսիային ու ԽՍՀՄ-ին, ապա ուրեմն Լեհաստանը պատրաստ է կատարելու իր դաշնակցային պարտավորութիւնները Յրանսիայի վերա-բերմամբ և նույնպես դուրս դալու ընդդեմ Գերմանիայի:

Իսկ ա՞յժմ: Լեհաստանը ներկայացրեց լիտի ուլտիմատում և հաջողեցրեց իր պահանջների բավարարումը:

Վոչ մի կասկած չկա, վոր վոչ միայն Լեհաստանն է ունեցել քաղաքականութիւն միքանի վարիանտներ Չեխոսլովակիայի վե-րաբերմամբ և վոչ միայն Չեխոսլովակիայի վերաբերմամբ: Հե-տաքրքրական մանրամասնութիւն. Յրանսիան դժվար թէ կա-րող է այժմ հույս դնել Հարավսլավիայի վրա վորպես իր դաշ-նակցի՝ ընդդեմ Գերմանիայի: Իսկ մինչդեռ Պրազայի հարավ-սլավյան դեսպանը ուումինական դեսպանի հետ միասին սեպտեմ-բերի 25-ին հայտարարեցին չեխոսլովակիան կառավարութիւնը, վոր Հարավսլավիան և Ռումինիան պատրաստ են կատարելու իրենց պարտավորութիւնները վորպես Փոքր Անտանտի մաս-նակիցներ և Չեխոսլովակիային ոգնութիւն կհասնեն Հունգա-րիայի կողմից հարձակում կատարվելու դեպքում:

Կարելի յե ամենաչնչին չափով իսկ չկասկածել, վոր յեթէ Անգլիան ու Յրանսիան հենց սկզբից ամուր և վճռական դիրք բռնեցին, Հիտլերը վոչ միայն կնահանջեր, այլև իր դաշնակից-ներին շատերին կկորցներ:

Ի՞նչն է, համենայն դեպս, գաղտնիքը: Այդ հարցի պատաս-

խանը պետք է վորոնել բուրժուական-դեմոկրատական պետու-
թյաններին, առաջին հերթին Անգլիայի կառավարող շրջաններին
քաղաքականութեան դատարարային բովանդակութեան մեջ:

Այսպէս կոչված «դեմոկրատական» պետութեանները -
իհարկէ, հավանութեան չեն տալիս Փաշխտական պետու-
թյաններին «ծայրահեղութեաններին» և վախենում են Փա-
շխտական պետութեաններին ուժեղանալուց: Բայց նրանք
էլ ավելի վախենում են բանվորական շարժումից Յեւրո-
պայում և ազգային-ազատագրական շարժումից Ասիայում,
գտնելով, վոր Փաշիզմը «լավ հակաթուշ» է ընդդեմ այդ
բոլոր «վտանգավոր» շարժումներին: Ուստի «դեմոկրատա-
կան» պետութեաններին ղեկավար շրջանները և, մանա-
վանդ, Անգլիայի ղեկավար կոնսերվատիվ շրջանները, «ահ-
մանախակվում են կապը կտրած Փաշխտական պարա-
զլուխներին համոզելու քաղաքականութեամբ—«բանը չհասց-
նել ծայրահեղութեան», միաժամանակ նրանց հասկացնե-
լով, վոր իրենք «լիովին հասկանում» և հիմնականում հա-
մակրում են նրանց սեպտիմոն-վոստիկանական քաղաքակա-
նութեանն ընդդեմ բանվորական ու ազգային-ազատագրա-
կան շարժման: Անգլիայի ղեկավար շրջաններն այստեղ հե-
տևում են մոտավորապէս նույնպիսի քաղաքականութեան,
վորպիսի քաղաքականութեան հետևում էլին ցարիզմի ո-
րով ռուսական լիբերալ-միապետական բուրժուանները, վո-
րոնք, վախենալով ցարական քաղաքականութեան «ծայրա-
հեղութեաններին», էլ ավելի վախենում էլին ժողովրդից
և այդ պատճառով անցան ցարին համոզելու քաղաքակա-
նութեան,—հետևապէս՝ ընդդեմ ժողովրդի՝ ցարի հետ խոս-
քը մեկ անելու քաղաքականութեան: Ինչպէս հայտնի չէ,
Ռուսաստանի լիբերալ-միապետական բուրժուական չա-
րաչար տուժեց այդպիսի յերկղիմի քաղաքականութեամբ
պատճառով: Պետք է յենթադրել, վոր Անգլիայի ղեկավար
շրջանները և նրանց բարեկամները Յրանսիայում ու
ԱՄՆ-ում նույնպէս կստանան իրենց պատմական հատու-
ցումը¹:

¹ Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Կուսակցութեան
պատմութիւն: Համառոտ դասընթաց, էջ 448—449:

Քարգմանեց Ա. Ջաֆարյան
Խմբագիր Վ. Փիլաշյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Մրբագրիչ Վ. Ջիլեյյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արվյան

Գլավիտի լիազոր №—2505, հրատ. № 633

Պատկեր № 181, տիրած 5000

Թղթի չափսը 62×94¹/₁₆ 38,400 տպ. նիշ 1 տպ. մամուլում
2 տպ. մամուլ, 1 թերթ թուղթ:

Հանձնված է արտագրութեան 13/XII 1938 թ.

Ստորագրված է տպագրելու 14/I 1939 թ.

Գինը 40 կ.

Պետհրատ—Քաղաքական գրականութեան հրատարակչութեան
տպարան, Յերևան, Ալավերդյան № 65

«Ազգային գրադարան»



NL0187918

ԳԻՆԸ 40 Կ.

Я. ВИКТОРОВ
АГРЕССИЯ В ЦЕНТРАЛЬНОЙ
ЕВРОПЕ

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939